ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 980

23 նոյեմբեր 2023թ.

«ՇՏՌԱԲԱԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝Պատվիրատու) և «Շտռաբագ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝Կապալառու) միջև 2022թվականի հուլիսի 25-ին կնքվել է թիվ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով Կապալային աշխատանքների կատարման պայմանագիր: Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. նոյեմբերի 1-ը: Պայմանագրի համաձայն՝ «Շտռաբագ» ՍՊԸ-ն պարտավոր էր սահմանված ժամկետում Ծաղկաձոր համայնքում տեղադրել թվով 4 կանգառ,սակայն մինչ այժմ տեղադրվել է 3-ը, այն էլ թերություններով,մասնավորապես՝ չեն տեղադրվել ապակիները,որոշ դետալներ առկա չեն,ինչպես նաև կանգառները արդեն ժանգոտվել են:

Ծաղկաձորի համայնքապետարանը բազմիցս զգուշացրել է պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու (4-րդ կանգառը տեղադրելու) համար,սակայն ընկերությունը հրաժարվել է՝ պատճառաբանելով,թե իբր կանգառներից մեկի ապամոնտաժման արդյունքում վնասվել է կանգառը և լրացուցիչ ֆինանսավորման դեպքում կտեղադրվի:

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ապամոնտաժված կանգառի հետ միասին ևս 2 կանգառ տեղադրվել է Ծաղկաձոր համայնքի տարածքում, իսկ 4-րդ կանգառը գտնվում է Կապալառուի տիրապետության տակ:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) . Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, թիվ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով պայմանագիրը համարում է միակողմանի մասնակի լուծված՝ 5,022,794 /հինգ միլիոն քսաներկու հազար յոթ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

2023թվականի նոյեմբերի 15-ին Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել Կապալառուի էլեկտրոնային փոստին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Շտառաբագ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 03026439) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել «Շտառաբագ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանը:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ